

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԿԳՄԿ գիտական խորհրդի

<<10>> հոկտեմբեր 2018թ. թիվ ___ նիստում

ՀՀ ԳԱԱ ԿԳՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան



ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԴԱՍԱԼՍՄԱՆ

Երևան 2018

1. Ընդհանուր դրույթներ

1.1 ԳԿՄԿ-ում դասավանդվող դասընթացների դասալսման կանոնակարգը սահմանվում է «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության կարգի» 24-րդ կետի համաձայն:

1.2 Ամբիոնների վարիչների կողմից դասընթացների դասալսումը որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից է, որի նպատակը որակի բարելավումն է:

1.3 Դասընթացների դասալսման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ է կատարվում ԳԿՄԿ ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների առաջարկների հիման վրա՝ ամբիոնի վարիչ, դեկան, ուսումնական մասի պետ:

1.4 Դասընթացների դասալսման ընթացակարգը վերանայվում և հաստատվում է ԳԿՄԿ Գիտական խորհրդում:

2. Դասընթացների դասալսման անցկացումը

2.1 Դասընթացների դասալսումը իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում, որը ներառվում է տվյալ ամբիոնի տարեկան աշխատանքային պլանում:

2.2 Դասընթացների դասալսումը իրականացվում է ամբիոնի վարիչի կամ ամբիոնի վարիչի ընտրությամբ ձևավորված դասախոսներից կազմված հանձնաժողովի կողմից:

2.2.1 Դասընթացների դասալսումը կարող է իրականացվել նաև ԳԿՄԿ տնօրինության որոշմամբ՝ դեկանատի և որակի ապահովման բաժնի կողմից՝ մշտադիտարկման շրջանակներում:

2.3 Ամբիոնի վարիչի /դեկանի/ նախաձեռնությամբ կարող է ձևավորվել դասախոսներից և վարչական անձնակազմից կազմված հանձնաժողով (2-5 հոգի):

2.4 Դասընթացների դասալսումն իրականացվում է սույն կանոնակարգին կից դասալսման ձևաթղթով:

2.5 Դասընթացների դասալսման ձևաթուղթը կազմված է հիմնական բաժիններից՝ դասախոսին ներկայացվող պահանջներ և դասընթացին ներկայացվող պահանջներ:

2.6 Ձևաթղթում առկա բաժինները ներառում են ուսանողների ներգրավվածությունը, վերաբերմունքը, տեխնիկան, ճշտապահությունը, գործնական և լաբորատոր աշխատանքը խմբի խետ:

2.7 Դասախոսների դասալսման ձևաթղթի լրացումից հետո այն ենթարկվում է որակական վերլուծության:

3.Դասընթացների դասալսման արդյունքների մշակում և պահպանում

3.1 Դասընթացների դասալսման ձևաթղթի որակական վերլուծությունը իրականացվում է ԳԿՄԿ տվյալ ամբիոնի ստորաբաժանման ՈԱ պատասխանատուի կողմից՝ ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի համապատասխան մասնագետի հետ համագործակցությամբ:

3.2 Դասընթացների դասալսման ձևաթղթի որակական վերլուծությունը վերահսկվում է ամբիոնի վարիչի կողմից:

3.3 Դասալսման ձևաթղթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:

3.4 Դասալսման ձևաթղթի վերլուծության արդյունքները ներկայացվում են համապատասխան ամբիոններում՝ առաջիկա նիստի ժամանակ և պահպանվում են ամբիոններում:

4. Դասընթացների դասալսման արդյունքների օգտագործումը

4.1 Դասընթացների դասալսման արդյունքները քննարկվում են ամբիոններում, ամրագրվում նիստերով, ինչպես նաև անհատապես դասախոսների հետ: Քննարկման հիմնական նպատակը ընդհանուր ձեռքբերումների և բացթողումների ներկայացումն է, հետագա բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումը և քայլերի սահմանումը:



**ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի
դասի/պարապմունքի գնահատման սխեմա**

1. Դասի/ պարապմունքի նպատակը	
2. Դասի/ պարապմունքի թեմայի համապատասխանությունը «Դասընթացի նկարագրին»	
3. Դասի/ պարապմունքի ժամանակ կիրառվող մեթոդներ/տեխնոլոգիաներ	
4. Դասախոսի դասավանդման ոճը	
5. Մատուցվող նյութի բովանդակությունը	
6. Դասախոսի դերը դասապրոցեսում	
7. Գնահատման նպատակը	
8. Գնահատման գործառույթները	

9. Չուսանողների ներկայությունը դասին	
Եզրակացություն	

1. Դասի/ պարապմունքի նպատակը	Ներկայացնել ուսուցման մեթոդները և ձևավորել պատկերացումներ ուսուցման մեթոդների կիրառության եղանակների վերաբերյալ
2. Դասի/ պարապմունքի թեմայի համապատասխանությունը «Դասընթացի նկարագրին»	Համապատասխանում է դասընթացի նկարագրին
3. Դասի/ պարապմունքի ժամանակ կիրառվող մեթոդներ/տեխնոլոգիաներ	Ինտերակտիվ դասխոսություն՝ հետադարձ կապի ապահովմամբ, մտագրոհ և այլն
4. Դասախոսի դասավանդման ոճը	
5. Մատուցվող նյութի բովանդակությունը	Ներկայացվեց ուսուցման մեթոդների դասկարգումը ըստ տեղեկույթի ձեռքբերման աղբյուրների, խոսքային, գործնական և զննական մեթոդների խմբերում ընդգրկված մեթոդների, դրանց գործնական կիրառության մեթոդներն ու տեխնոլոգիաները:
6. Դասախոսի դերը դասապրոցեսում	Դասախոսության մեթոդի կիրառության ժամանակ՝ տեղեկատվության հաղորդող, Մտագրոհի ժամանակ՝ գործընթացի կազմակերպիչ, կառավարիչ և խորհրդատու, Ինտերակտիվ հաղորդակցության ժամանակ՝ գործընթացի կառավարիչ
7. Գնահատման նպատակը	
8. Գնահատման գործառույթները	
9. Ուսանողների ներկայությունը դասին	
Եզրակացություն	



ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամիս ամսաթիվ -----

Մասնագիտությունը, կուրսը -----

Առարկան -----

Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը -----

Դասի թեման -----

Դասալսման նպատակը -----

Ուսանողների թիվը -----, որից բացակա են -----

Դասի կահավորումը, կազմակերպչական հատվածը -----

(Գործնական և սեմինար պարապմունքներ, խառը կամ համակցված դասերի համար)

Հարցումների քանակը ----- հարցման տևողությունը -----

Հարցման, քննարկման համառոտ վերլուծություն (պատասխանների արժեքավորման օբեկտիվությունը, ուսանողների խրախուսման և ակտիվացման մեթոդները, գիտելիքների խորությունը, դասախոսի մանկավարժական վարպետությունը) -----

Թեմայի հաղորդմանը հատկացված ժամերի քանակը -----

Մանկավարժական վարպետության վերլուծություն (դասի տիպը, նրա առանձին բաղադրամասերը, դասավանդման մեթոդները, տեսականի կապը գործնականի հետ, մատչելիությունը, զննականությունը, դասավանդման արդյունավետություն և ուսանողների մտավոր գործունեության ակտիվացման միջոցները, ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործումը, դասի բովանդակության համապատասխանությունը օրացուցային թեմատիկ պլանին, ուսանողների կողմից նյութի յուրացման մակարդակը -----

<p>Դասի դրական կողմերը</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p>	<p>Դասի թերությունները</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p>
<p>Դիտողություններ</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p>	<p>Առաջարկություններ, հետևություններ</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p> <p>-----</p>

Դասը լսեցին՝